ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

06.02.2024թ. N 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 05

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 06-ի N 02 նիստի օրակարգը.

1) Հրազդան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին

2) Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բաժինների կանոնադրությունները հաստատելու մասին

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 190 և 191 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

5) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07 -ի N 200 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

6) Տեղական վճարների արտոնություն կիրառելու մասին

7) Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

9) Հրազդան համայնքի ինգամյա զարգացման ծրագրի 2023 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

11) Գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին

12) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով

օտարելու մասին
13) Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
14) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
15) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին
16) Հողամասերի փոխանակություն կատարելու մասին
17) Ասատուր Քաջիկի Թադևոսյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
18) Զոյա Գուրգենի Ալավերդյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
19) Սարգիս Հովհաննեսի Բալյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
20) Լիանա Հովհաննեսի Չիդիլյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
21) Արտաշ Սերգեյի Գրիգորյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
22) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
23) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
24) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 06

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեում հատկացնել 10 000 000 /տասը միլիոն/ դրամ գումար՝ 2024 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են ընդհանուր տարածքների բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, ապաստարանների վերազինման ոլորտները:
3.Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ համայնքի բնակիչները և հասարակական կազմակերպությունները:
4. Համայնքի ղեկավարին՝
1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը (ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -3

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 07

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բաժինների կանոնադրությունները՝ համաձայն № № 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -13

Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ՍՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված N1
Հրազդան համայնքի ավագանու
2024թ.մարտի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Քաղաքաշինության և հողաշինության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ օրենքներով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն, 15.03.2015թ. թիվ 596-Ն և այլ որոշումներով, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամաններով, Հրազդան համայնքի գլխավոր հատակագծով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

6. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Իրականացնում է վերահսկողություն քաղաքաշինության բնագավառում,

2) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի գլխավոր հատակագծի կազմման քաղաքաշինության առնչվող գործառույթներ,

3) Նախապատրաստում, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համայնքի ավագանու որոշումների նախագծեր,

4)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գրանցմանը,

5)Մասնակցում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման գործընթացներին,

6)Համայնքի նպատակահարմարությունից ելնելով, ըստ գլխավոր հատակագծի նպատակային նշանակության և գոտիավորման նախագծերի, իրականացնում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործառույթներ,

7)Անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական

ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին,
8)Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծերի, կազմում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլատվություն) և ներկայացնում հաստատման,
9) Իրականացնում է շինարարության թույլատվության տրամադրման կազմման, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման գործառույթներ,

10)Իրականացնում է համայնքի տարածքում առկա սահմանված կարգով հաշվառված, օրինականացման ենթակա ինքնակամ կառույցների հասցեավորման, տեխնիկական եզրակացության ձեռքբերման և օրինականացման գործառույթներ,
11)Ըստ տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, հաստատված նախագծերի և շինարության թույլատվության իրականացնում է վերահսկողություն կատարման ժամկետների, նախագծի համապատասխանության և այլ նորմերի պահպանման նկատմամբ,
12)Կազմակերպում է համայնքի տարածքում անշարժ գույքերի հասցեավորման գործընթացը,
13) Իրականացնում է քարտեզագրման ուղղման աշխատանքներ,
14)Ապահովում է ՀԿՏՀ համակարգում համայնքային կայքում գույքի կառավարում բաժնի համապատասխան տեղեկատվության տեղադրումը,
15) Կազմակերպում է համայնքի տարածքում անշարժ գույքերի հասցեավորում,
16) Կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին,
17)Իրականացնում է սահմանված կարգով համայնքային նշանակության ընթացիկ շինարարությունների կատարողական և ծածկված աշխատանքների ակտերի ուսումնասիրություն,անհրաժեշտության դեպքում տալիս ցուցումներ,
18)Ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը,
19)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ. ապահովում է այդ խորհրդակցությունների ու հանդիպումների արձանագրությունների կազմումը,
20)Իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, խորհրդատվություն,
21)Համայնքապետարանի կողմից կատարվող կապիտալ և ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում իրականացնում է պատվիրատուին վերապահված գործառույթներ, աշխատանքների կատարման որակի վերահսկում, աշխատանքների ընդունում,
22) Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
23)Բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

24) Իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ,
25) Ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15. Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 2
Հրազդան համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հողային օրենսգրքով», «Անտառային օրենսգրքով», «Ջրային օրենսգրքով», «Ընդերքի մասին օրենսգրքով», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և այլ օրենքներով, Հայաստանի Հանապետության կառավարության որոշումներով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:
3. Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:
6. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.
1) Համայնքի սեփականություն հանդիսացող պահուստային հողերի գոտիավորման, օգտագործման, օտարման, ինչպես նաև սահմանված վարձավճարներով օգտագործման, տրամադրման աշխատանքներ,
2) Գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ օգնություն և օժանդակություն գարնան գյուղատնտեսական աշխատանքներում (մատչելի գներով պարարտանութի, դիզ.վառելիքի, սերմերի ձեռքբերում),
3) Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը ըստ գործառնական նշանակության օգտագործման նպատակով միջոցառումների իրականացում,
4) Համայնքի տարածքում գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների անասնագլխաքանակի հաշվառում, հաշվետվության ներկայացում, աշխատանքների կոորդինացում,
5) Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների նկատմամբ ախտորոշիչ սերոլոգիական, կանխարգելիչ պատվաստման միջոցառումների կազմակերպման նկատմամբ վերահսկողություն,
6) Համայնքի տարածքում անտառների ծառատնկման, կանաչապատման, կանաչ գոտու ձևավորման, բարեկարգման աշխատանքների իրականացում,

7) Բնական տարերային աղետներից խուսափելու համար միջոցառումների կազմակերպում, տուժած տնտեսություններին համապատասխան օգնության ցուցաբերում,
8) Համագործակցում Հրազդանի տարածքային վիճակագրական վարչության հետ վիճակագրական տվյալների և հաշվետվությունների ամփոփում ըստ թաղամասերի,
9) Համայնքում մշակվող բույսերի բազմամյա տնկարկների, բուսական կերհանդակների, վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում,
10)Մասնագիտական և կազմակերպչական օգնություն տնտեսություններին, բերքահավաքի, աշնանացանի աշխատանքները սեղմ ժամկետներում կազմակերպելու համար,
11)Համայնքի հանքավայրերի շահագործման օրինականության վերահսկում, ընդերքօգտագործողների կողմից ընդերքի մասին ՀՀ օրենսդրության դրույթների կատարման ապահովում,
12)Բնակչության սոցիալ-տնտեսական, կենցաղային և այլ աշխատանքների կազմակերպում, անմիջական կապ քաղաքացիների հետ:
13) Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
14) Ուսումնասիրել բնակչության դիմումները, բողոքները գյուղատնտեսության, բնապահպանության ոլորտում և պատասխանել:
15) Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնել այլ լիազորություններ:
16) Իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15. Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված 3
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսատնտեսագիտական բաժինը (այսուհետ՝Բաժին) կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի հրամաններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:

2. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Բաժնի հիմնական խնդիրն է՝ համայնքի բյուջեի նախագծի կազմումը, հաշվապահական հաշվառման վարումը, համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններն իրականացնելիս՝ համայնքի ղեկավարին ֆինանսական հարցերի լուծման բնագավառում օժանդակումը:
2. Բաժնի գործառույթները բխում են համայնքի տնտեսության (պահպանում, զարգացում, կրթություն, սոցիալական, մշակութային, արտադպրոցական դաստիարակության, ճանապարհային տնտեսություն և այլն) և ֆինանսների բնագավառում ՀՀ օրենսդրությամբ Հրազդան համայնքի ղեկավարին և համայնքապետարանի աշխատակազմին տրված լիազորություններից և կոչված են դրանց կենսագործմանը:
3. Բաժինն իր խնդիրներին համապատասխան և վերապահված լիազորությունների շրջանակներում, բաժնի պետի ղեկավարությամբ, կատարում է հետևյալ գործառույթները.
1)օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և պետական կառավարման իրավասու մարմինների մեթոդական

ցուցումների հիման վրա կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում համայնքի բյուջեի, բյուջեում փոփոխություններ կատարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծերը, տալիս դրանց ֆինանսական հիմնավորումները,

2)իր իրավասության շրջանակներում կազմակերպում ու ապահովում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ղեկավարին է ներկայացնում բյուջեի կատարման մասին եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ավագանու որոշման նախագծերը,

3)կատարում է բյուջեի կատարման հաշվառում, վարում է բյուջեում կատարված փոփոխությունների հաշվառում, բյուջեի կատարումը չապահովելու դեպքում համապատասխան առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին,

4)միջոցառումներ է իրականացնում բյուջետային միջոցների խնայողաբար ծախսման, դրանց նպատակային օգտագործման ուղղությամբ,

5)քննարկում է համայնքային ենթակայության կազմակերպությունների հաշվապահական հաշվետվությունները, հաշվեկշիռները և ֆինանսական գործունեությունը, պարբերաբար անցկացնում է ստուգումներ և համապատասխան առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին,

6)համայնքային ենթակայության կազմակերպություններից պահանջում է ֆինանսական տեղեկություններ, ծախսերի նախահաշիվներ, համայնքի բյուջեն կազմելու համար անհրաժեշտ այլ նյութեր, հաշվապահական հաշվետվություններ ու հաշվեկշիռներ, ինչպես նաև այլ հաշվետվական տվյալներ, որոնք անհրաժեշտ են ֆինանսավորման, կազմակերպությունների կողմից համայնքի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման ֆինանսական կարգապահության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար,

7)առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին սահմանափակելու, իսկ անհրաժեշտության դեպքում կասեցնելու ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսավորումը համայնքի բյուջեից, եթե կան նրանց կողմից անօրինական ծախսերի փաստեր, ինչպես նաև, եթե չեն ներկայացվել նախկինում բաց թողնված միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություններ և այլ նյութեր,

8)իրականացնում է Հրազդան համայնքի բյուջեի ծախսերի ֆինանսավորում (նախահաշիվների, պայմանագրերի, պայմանագրից քաղվածքների, կատարման ժամանակացույցերի կազմում, հաստատում, ֆինանսավորման հայտերի հիման վրա վճարման հանձնարարագրերի պատրաստում և այլն),

9)գանձապետական համակարգի միջոցով իրականացնում է Հրազդան համայնքի բյուջեի դրամական միջոցների կառավարում, եկամուտների ու ծախսերի ամենօրյա հաշվառում, դրանց ճշտության ստուգում, սխալ մուտքագրված գումարների վերադարձման հետ կապված փաստաթղթերի կազմում և անհրաժեշտ տեղեկանքների տրամադրում, անհրաժեշտության դեպքում առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին սխալ կամ ավել վճարված մուտքերի հետ վերադարձի մասին, ապա ստանալով համայնքի ղեկավարի որոշումը, այդ նպատակով կազմակերպում է մուտքի կամ վճարի հետ վերադարձ: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ, բաժնի համապատասխան աշխատակիցը իր սպասարկման ոլորտի կազմակերպության, համայնքային ոչ առևտրային կազմակերպության, բյուջետային հիմնարկի գործարքի փաթեթը, գանձապետական համակարգով իրականացնում է վճարումը՝ կատարելով ծախս:

Բաժինը իրականացնում է նախահաշվի սահմաններում վերահսկողություն՝ համապատասխան գործարքի հիմքերի առկայությունը, մասնավորապես՝ բանկային գործարքների դեպքում վճարման համար հիմք է հանդիսանում համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշումը, համայնքի բնակչի դիմումը կամ կազմակերպության ներկայացուցչի գրությունը, որին պետք է կցված լինի վճարման անդորրագիրը,

անձնագրային և բանկային տվյալները: Պայմանագրային գործարքների դեպքում վճարման համար հիմք է հանդիսանում կնքված պայմանագիրը կամ համաձայնագիրը, հաշիվ-ապրանքագիրը կամ հաշիվ-վավերագիրը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ընդունած աշխատանքը հավաստող հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված դրական եզրակացությունը:

Աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարումների, պարգևատրումների և արձակուրդայինների վճարման դեպքում հիմք են հանդիսանում համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի հրամանները, կարգադրությունները, համապատասխան բաժնի պետի կողմից ներկայացված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը:

10)վարում է Հրազդան համայնքի հաշվապահական հաշվառումը,

11)մասնակցում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կազմման աշխատանքներին՝ մեթոդական ուղեցույցներին համապատասխան, ներկայացնում է առաջարկություններ,

12) կազմում է ծրագրեր և համակարգում դրանք,

13)նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

14)իրականացնում է Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով իրեն վերապահված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:

5.Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:

6.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:

7.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:

8.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.

9.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:

10.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

11.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 4
Հրազդան համայնքի ավագանու
2024 թ. փետրվարի 6-ի № 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու և ղեկավարի որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3.Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

6. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի, պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող հողերի և համայնքի աղբահանության բազաների վարման աշխատանքները,

2) Իրականացնում է համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի, անշարժ գույքի հարկի և գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների գույքահարկի, սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող և այդ տարածքում հաշվառված (գրանցված), ինչպես նաև այդ տարածքում գրանցված կազմակերպությունների փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրում,

3) Աշխատանքներ է իրականացնում տնտեսվարող սուբյեկտների գույքահարկի, հողի հարկի և անշարժ գույքի հարկի ապառքների, տույժերի հավաքագրման ուղղությամբ,

4) Օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի հարկի հավաքագրում,
5) Իրականացնում է անշարժ գույքի հարկ, հողի հարկ, գույքահարկ և փոխադրամիջոցների համար գույքահարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և նրանց փոխադրամիջոցների տվյալների ճշտում՝ ստացված տեղեկությունների համադրման և համեմատման միջոցով,
6) Իրականացնում է համայնքի վարչական տարածքում գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինություններ ունեցող կազմակերպությունների և դրանց պատկանող շինությունների ցանկի ճշտում՝ համադրման և համեմատության միջոցով,
7) Անշարժ գույքի հաշվառման համար լիազոր մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց, նրանց շինություններին վերաբերող ճշտված տվյալների հիման վրա գույքահարկի տեղեկատվական բազայի ճշտման աշխատանքներ,
8) Իրականացնում է պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի հաշվառման և վարձավճարների հավաքագրման աշխատանքներ,
9) Իրականացնում է համայնքի վարչական տարածքում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանց և տնտեսվարող սուբյեկտների ցանկի ճշտում լիազոր մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա՝ համադրման և համեմատության միջոցով,
10) Օրենքով սահմանված կարգով իրականացնում է համայնքի աղբահանության վճարների հավաքագրում,
11) Իրականացնում է ֆինանսական ցուցանիշների վերլուծումը և ամփոփումը համայնքի բյուջեի կատարումն ապահովող հանձնարարականների կատարման շրջանակներում:
12) Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
13) Իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8.Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.

12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15. Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 5
Հրազդան համայնքի ավագանու
2024 թ. փետրվարի 6-ի № 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Առևտրի և ծառայությունների մասին», «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչական իրավախախտումների մասին», օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

6.Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Կազմում է համայնքի տարածքում գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտների գործունեության թույլտվությունների նախագծեր,

2)Ապահովում է համայնքի ղեկավարի այն որոշումների և կարգադրությունների կատարումը և (կամ) կատարման հսկողությունը, որոնք վերաբերում են տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնին,

3)Բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

4)կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին,

5)համայնքի ղեկավարի կամ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ստուգումներ՝ համայնքում գործունեություն իրականացնող առևտրի և սպասարկման օբյեկտներում,

6)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարումը,

7)նախապատրաստում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ավագանու որոշումների նախագծեր,
8)հսկողություն է իրականացնում համայնքի տարածքում հիմնարկների և ձեռնարկությունների գովազդային վահանակների և գովազդային պաստառների տեղադրման օրինականության վերաբերյալ,
9հսկողություն է իրականացնում համայնքի վարչական տարածքում արգելելու համար չնախատեսված վայրերում բացօթյա առևտուրը,
10)կազմակերպում է համայնքի տարածքում չօգտագործվող, հնացած և անշուք գովազդային պաստառների հայտանաբերման և ապամոնտաժման աշխատանքները,
11)համաձայն համայնքի ավագանու որոշման՝ կազմակերպում է վարձակալության պայմանագրերի կնքումը լուսավորության հենասյուները որպես հենարան (մալուխների անցկացման, գովազդի տեղադրման) օգտագործելու համար,
12)նախապատրաստում և ավագանու նիստին է ներկայացնում համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին նախագիծը,
13)իրականացնում է ֆինանսական ցուցանիշների վերլուծումը և ամփոփումը համայնքի բյուջեի կատարումն ապահովող հանձնարարականների կատարման շրջանակներում,
14)Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
15)Եռամսյակային և տարեկան հաշվետվություններ է ներկայացնում մարզպետարան՝ համայնքի վարչական տարածքում գործող առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտների քանակի վերաբերյալ,
16) Իրականացնում է իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային

ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է << օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N6
Հրազդան համայնքի ավագանու
2024 թ. փետրվարի 6-ի № 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այդ թվում՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով::

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Բաժնի խնդիրներն են՝

1)Նախադպրոցական և արտադպրոցական կրթության բնագավառում պետական միասնական քաղաքականության իրականացման և համակարգման ապահովումը,

2)Նախադպրոցական և արտադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ցույց տրվող ուսումնամեթոդական օգնության աշխատանքների համակարգումը,

3)Համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների նպատակային գործունեության պայմանների բարելավմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը նպաստելն ու օժանդակելը,

4)Ուսումնասիրությունների միջոցով նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության հիմնախնդիրների բացահայտումը և վերլուծությունը,

5)Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների համագործակցությանը և զարգացմանն աջակցելը,

6)Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը,

7)Համայնքի հանրային կյանքին, այդ թվում՝ հասարակական, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովումը,
8)Երիտասարդների զբաղվածությանը, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, աշխատաշուկայում երիտասարդների ներուժի ներգրավմանն ուղղված աշխատանքների համակարգումը,
9)Համայնքում մշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված աշխատանքների համակարգումը,
10)Սոցիալական աջակցության պետական ծրագրերի հասցեականության մեծացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,
6.Բաժնի գործառույթներն են՝
1)Համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ իրականացման ապահովումը,
2)Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:
3)Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններից ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունումը, վերլուծումը և ամփոփումը համայնքի բյուջեի կատարումն ապահովող հանձնարարականների կատարման շրջանակներում:
4)Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության, գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն ուղղված աշխատանքներին աջակցության տրամադրումը,
5)Երիտասարդների զբաղվածության հարցերի լուծմանը նպաստելը և հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կենտրոնների հետ սերտ համագործակցությունը, համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը աջակցելը,
6)Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացմանն ուղղված ներհամայնքային և միջհամայնքային զանգվածային մարզական միջոցառումների և մրցույթների կազմակերպումը,
7)Սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների և ընտանիքների հայտնաբերման ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկումը,
8)Սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների սոցիալական և նյութական պայմանների ուսումնասիրումը,
9)Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
10) Բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը,
11)Իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8.Բաժինը գլխավորում է բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 7
Հրազդանի համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Կոմունալ տնտեսության համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Համատիրության մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Համատիրության մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» և այլ օրենքներով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

6. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Համակարգում է համատիրությունների աշխատանքները:

2)Իրականացնում է համայնքի շենք-շինությունների պետական գրանցումների հետ կապված գործառույթներ:

3)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գրանցմանը:

4)Աշխատակազմում քննարկվող համատիրության աշխատանքների վերաբերյալ հարցերին տալիս է եզրակացություններ.

5)Իրականացնում է համայնքում գտնվող բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականաշնորհման գործընթացի փաստաթղթաշրջանառության իրականացումը:

6)Համայնքապետարանի կողմից կատարվող կապիտալ և ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ կատարելու դեպքում իրականացնում է պատվիրատուին վերապահված գործառույթներ՝ աշխատանքների կատարման որակի վերահսկում, աշխատանքների ընդունում.

7)Անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ.
8)Անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին:
9)Կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը, հաշվառմանն ու բաշխմանն ուղղված գործառույթների իրականացումը.
10)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ՝ իրականացնելով քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և լուծումների առաջադրումը:
11)Ձեռնարկում է համապատասխան միջոցներ համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման և ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը:
12)Համայնքի ղեկավարի կամ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ստուգումներ համայնքային ենթակայության կառույցներում.
13)Կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից:
14)Ապահովում է համայնքային կայքում գույքի կառավարում բաժնի համապատասխան տեղեկատվության տրամադրումը:
15)Մասնակցում է համայնքի տարածքում հաստատված երթուղիների մրցույթների կազմակերպմանը, կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը և վերահսկողություն է իրականացնում տվյալ բնագավառում.
16)Իրականացնում է վերահսկողություն համայնքի վարչական տարածքում գործող մարդատար տաքսիների և տրանսպորտի գործունեության կազմակերպման նկատմամբ:
17)Մասնակցում է համայնքին ենթակա տարածքներում ինժեներական կոմունիկացիաների անցկացման համար ուրվագծերի ընտրությանը
18)Քաղաքացիներին տրամադրում է համատիրության աշխատանքների վերաբերյալ խորհրդատվություն.
19)Կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի և այլ տեխնիկական միջոցների կամուրջների և ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը:
20)Իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, խորհրդատվություն.
21)Իրականացնում է համայնքապետարանին պատկանող մեքենաներիտեխզննման և ԱՊՊԱ-ի կազմակերպում:
22)Իրականացնում է համայնքային սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների վարձակալության տրամադրումը, պայմանագրերի կնքումը և վարձավճարների գանձման նկատմանբ վերահսկողությունը:
23)Մասնակցում է համայնքային սեփականություն համարվող գույքերի մրցույթների կազմակերպմանը:
24) Կազմակերպում է անվճար երթևեկության տոմսերի տրամադրումը սոցիալապես անապահով հաշմանդամության կարգ ունեցող քաղաքացիներին, զոհվածների ընտանիքներին:

25)Իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից
26)Ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի,առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը:
27)Ստորագրում է իր բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:
28)Իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 8
Հրազդան համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման իրավական ապահովումը:

6.Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1)Մշակում է տեղական ինքնակառավարման իրականացմանն ուղղված իրավաբանական բնույթի հարցեր լուծող որոշումների և կարգադրությունների նախագծեր և ներկայացնում է համայնքի ղեկավարին,

2)Ապահովում է համայնքի ղեկավարի այն որոշումների և կարգադրությունների կատարումը և (կամ) կատարման հսկողությունը, որոնք վերաբերում են Աշխատակազմի իրավաբանական բնույթի գործառույթներին,

3)Ստուգում է համայնքի ղեկավարին ներկայացվող որոշումների և կարգադրությունների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և նշագրում դրանք,

4)Աշխատակազմում քննարկվող իրավաբանական լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ տալիս է եզրակացություններ,

5)Իրականացնում է ՀՀ օրենսդրական ակտերի և ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ բնույթի որոշումների համակարգումը,

6)Բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

7)Անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից,

կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
8)Կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում Աշխատակազմի քարտուղարին.

9)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ,
10)Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրումը և օրենսդրությանը հակասող իրավական ակտերի վերացումը կամ կասեցումը,
11)Համայնքի ղեկավարի կամ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ստուգումներ համայնքային ենթակայության կառույցներում,
12)իրականացնում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստումը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նախագծերի վերաբերյալ տալիս է իրավական- փորձագիտական եզրակացություն,
13)հանդես է գալիս դատական ատյաններում՝ որպես համայնքապետարանի ներկայացուցիչ, աջակցում է դատարանների վճիռների և որոշումների կատարմանը, միջոցներ է ձեռնարկում համայնքի ազգաբնակչության իրավունքներն ու օրինական շահերն ապահովելու ուղղությամբ,
14) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է վարչական վարույթների հարուցման և իրականացման գործընթացները,
15) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման դիմումների ընդունման գործընթացը,
16) տրամադրում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ խորհրդատվություն,
17) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի թղթային կրիչի վրա տրամադրման աշխատանքները,
18) ապահովում է թղթային արխիվի պահպանումը և թվայնացման աշխատանքները,
19) իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից,
20)ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը,
21)իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:

8. Բաժինը գլխավորում է Բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է Աշխատակազմի քարտուղարին:
9.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:
10.Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
11.Բաժնի պետը կազմակերպում է Բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
12.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
13.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
14.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

15.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N9
Հրազդան համայնքի ավագանու
2024 թ. փետրվարի 6-ի № 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայությունների ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հանրագրերի մասին», «Արխիվային գործի մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) որոշումներով և կարգադրություններով, ավագանու որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

4.Բաժնի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

2.ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի հիմնական խնդիրներն է իր իրավասության շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը, ինչի իրականացման նպատակով բաժնի կողմից կատարվում են հետևյալ գործառույթները.

1) համայնքի պաշտոնական կայքի վարումը, կայքի կառավարման և ՀԿՏՀ տվյալների շտեմարանի և ֆայլերի արխիվացման աշխատանքները.

2)օրենքով սահմանված կարգով կազմակերպում է ՀԿՏՀ ծրագրի միջոցով համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրոնային գործավարությունը, դիմումների, առաջարկությունների, բողոքների և պաշտոնական գրությունների փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքները

3)ապահովում է փաստաթղթերի մուտքագրման և ելից փաստաթղթերի առաքման աշխատանքները,

4) ապահովում է համայնքի ավագանու նիստերի, որոշումների, համայնքի ղեկավարի կարգադրությունների ու որոշումների, աշխատակազմի քարտուղարի հրամանների հաշվառումն ու համարակալումը ՀԿՏՀ համակարգում, ինչպես նաև խորհրդակցությունների, ընդունելությունների և այլ քննարկումների արձանագրում և հանձնարարականների կատարման հսկողությունը.

5) ՀԿՏՀ համակարգում իրականացնում է բնակչության և կազմակերպությունների ռեգիստրի վարման աշխատանքներ.
6) կազմակերպում է քաղաքացիների սպասարկման գրասենյակի աշխատանքները:
7)կազմակերպում է համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության հետ կապված աշխատանքները.
8)Հրազդանի համայնքապետարանի աշխատակիցների կադրային գործի վարումը (հաշվառումը, արձակուրդների ձևակերպումն ու կադրերի հետ կապված այլ աշխատանքների իրականացում)
9)ապահովում է սահմանված ժամկետում փաստաթղթերի արխիվ ընդունելը, դրանց պահպանումը և անհրաժեշտության դեպքում տրամադրումը.
10) իր իրավասության շրջանակներում կազմում և Աշխատակազմի գնումների զարգացման և ծրագրերի բաժին է ներկայացնում Համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմամբ և Համայնքապետարանի բնականոն գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտերը՝ ելնելով բաժնի աշխատակիցների՝ գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություններից:
11)իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

3.ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
7.Բաժինը գլխավորում է բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:
8.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատակիցները:
9.Բաժնի աշխատանքները ղեկավարում է բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:
10.Բաժնի աշխատանքներիկազմակերպմանը մասնակցում է քաղաքացիների սպասարկման գրասենյակը:
11.Բաժինն անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին՝ իրենց կանոնադրական լիազորություններն իրականացնելու գործում:
12.Բաժնի պետը՝ կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.
13.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:
14.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:
15.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4.ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մարմնի մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 10
Հրազդան համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 6-ի N 07 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) գնումների և զարգացման ծրագրերի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, չունի իրավաբանական անձի կարգավիճակ:
2.Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Գնումների մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, Հրազդան համայնքի ավագանու որոշումներով, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Աշխատակազմի քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:
3.Բաժինը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում է համայնքի ավագանին:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.Բաժնի հիմնական նպատակը, գնումների մասին գործող օրենսդրությանը համապատասխան, Համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների պլանավորումն ու գնումների իրականացումն է, տեղական մակարդակում համայնքի տնտեսական զարգացման ծրագրերի իրագործումը:
6.Բաժնի նպատակներն են՝
1)Համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ գնումների կազմակերպումը,
2)գնման առարկայի բնութագրերի հաստատումը,
3)համապատասխան հանձնաժողովների կազմավորման և գործունեության կազմակերպումը,
4)գնումների հետ կապված հայտարարության և հրավերի կազմակերպումը,
5)պայմանագրերի հիմնական պայմանների առաջարկությունների ներկայացումը,
6)գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորումը,
7)ընթացակարգերի հաջորդականության, կատարման ժամկետների և գնման գործընթացի կառավարման մարմինների և սուբյեկտների հիմնական գործառույթների կազմակերպումը:
7.Բաժնի հիմնական խնդիրներն են՝
1)Ստորաբաժանումների առաջարկի հիման վրա Համայնքապետարանի կարիքների համար ապրանքների գնման և ծառայությունների պլանավորումը,
2)Համայնքապետարանի կարիքներից բխող գնման առարկայի, օբյեկտի, գործընթացի բովանդակության և ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման հետ կապված հարաբերությունների իրականացմանը ներկայացվող պահանջների սահմանումը,
3)գնման ընթացակարգի մասնակիցների՝ Համայնքապետարանի գնումներին մասնակցելու հավասար, արդար և ոչ խտրական պայմանների ապահովումը,
4)արդար մրցակցության սկզբունքների ապահովում՝ գնումների գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպմամբ,

5)Համայնքապետարանին ապահովումը ապրանքներով, աշխատանքներով և ծառայություններով՝ դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև տնտեսապես հիմնավորված (ապրանքի շուկայական արժեք) ծախսերի կատարումը:

8.Բաժնի գործառույթներն են՝

1)գնումների պլանավորումը,

2)գնումների նախապատրաստումը,

3)պայմանագրերի նախագծերի պատրաստումը,

4)պայմանագրերի կառավարումը,

5)պայմանագրերի լուծման գործընթացի կազմակերպումը:

6)Մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ ՏԻՄ, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության դերակատարների հետ համատեղ, համապատասխանեցնում ԶԾ-ը առկա այլ փաստաթղթերի հետ, ներառյալ՝ մշակված ռազմավարություններ, ծրագրեր և մասնավոր հատվածի պլաններ,

7)Ապահովում է համայնքի զարգացման ծրագրի իրականացման տարեկան գործունեության ծրագրի /կամ տարեկան աշխատանքային պլանի/ մշակումը և ավագանու հաստատմանը ներկայացնելը, ինչպես նաև հաստատված աշխատանքների կատարումը,

8)Իրականացնում է գործողությունների պլանի մշակման և իրականացման գործընթացը՝ առկա բյուջեի և համայնքապետարանի կողմից սահմանված առաջնահերթությունների շրջանակներում,

9)Կազմակերպում և համակարգում է համայնքի սուբվենցիայի ծրագրերը՝ վերահսկելով ծրագրերի իրականացման գործընթացը: Կազմում է ընթացքի մեջ գտնվող ծրագրերի հաշվետվություններ՝ իրականացնելով մշտադիտարկումներ,

10)Նպաստում է մարքեթինգային միջոցառումների կիրառմանը՝ ներդրումների ներգրավման նպատակով,

11)Հավաքագրում է տեղեկատվություն միջազգային տոնավաճառների, ցուցահանդեսների վերաբերյալ, որտեղ կարող է ներկայացվել համայնքապետարանի ներուժը:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9.Բաժինն ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:

10.Բաժինը գլխավորում է բաժնի պետը, որը ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

11.Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատակիցները:

12.Բաժնի աշխատանքները ղեկավարում է բաժնի պետը և վերահսկում է սույն կանոնադրությամբ սահմանված աշխատողների իրավունքների, պարտականությունների ճիշտ կատարմանը:

13.Բաժնի պետը կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին ու պատշաճ որակով կատարումը.

14.Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի քարտուղարը:

15.Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

16.Բաժնի պետի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, համայնքային ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով:

4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

17.Բաժնի կառուցվածքային փոփոխությունը և գործունեության դադարեցումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, «Համայնքային ծառայության մասին» օրենքով, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 190 ԵՎ 191 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» № 190 որոշման մեջ «460 000» թիվը փոխարինել «590 000» թվով:
2.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N191 որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը և տարածվում է 2024 թվականի փետրվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի
N 08 որոշման

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7-ի
N 191 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 109

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /սահմանվում է հաստիքային 1 միավորի համար/	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1		590,000		590,000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1		477,000		477,000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1		420,000		420,000
4	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1		407,000		407,000
5	Համայնքի ղեկավարի խորհրդական	2		360,000		720,000
6	Համայնքի ղեկավարի օգնական	1		287,000		287,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
7	Սոլակ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
8	Քաղսի բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
9	Լեռնանիստ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
10	Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար	1		321,000		321,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					-
11	Աշխատակազմի քարտուղար	1	1.1-1	477,000		477,000
	Քաղաքաշինության և հողաշինության բաժին					-
12	Բաժնի պետ	1	2.1-1	407,000		407,000
13	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	2.3-1	274,000		274,000
14	Գլխավոր մասնագետ	1	2.3-2	274,000		274,000
15	Գլխավոր մասնագետ	1	2.3-3	274,000		274,000
16	Առաջատար մասնագետ	1	3.1-1	223,000		223,000
17	Առաջատար մասնագետ	1	3.1-2	223,000		223,000
18	Առաջատար մասնագետ	1	3.1-22	223,000		223,000
19	1-ին կարգի մասնագետ	1	3.2-1	198,000		198,000
	Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին					-
20	Բաժնի պետ	1	2.1-2	407,000		407,000
21	Գլխավոր մասնագետ	1	2.3-4	274,000		274,000
22	Առաջատար մասնագետ	1	3.1-3	223,000		223,000
23	Առաջատար մասնագետ	1	3.1-4	223,000		223,000
24	1-ին կարգի մասնագետ	1	3.2-2	198,000		198,000
	Ֆինանսատնտեսագիտական բաժին					-
25	Բաժնի պետ	1	2.1-10	407,000		407,000
26	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	2.2-4	327,000		327,000
27	Գլխավոր մասնագետ	1	2.3-25	274,000		274,000

28	Գլխավոր մասնագետ	1	2.3-26	274,000		274,000
29	Գլխավոր մասնագետ	1	2.3-27	274,000		274,000
30	Գլխավոր մասնագետ	1	2.3-28	274,000		274,000
31	Առաջատար մասնագետ	1	3.1-23	223,000		223,000
32	Առաջատար մասնագետ	1	3.1-24	223,000		223,000
	Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին					-
33	Բաժնի պետ	1	2.1-4	407,000		407,000
34	Գլխավոր մասնագետ	1	2.3-10	274,000		274,000
35	Գլխավոր մասնագետ	1	2.3-11	274,000		274,000
36	Գլխավոր մասնագետ	1	2.3-12	274,000		274,000
37	Գլխավոր մասնագետ	1	2.3-13	274,000		274,000
38	Առաջատար մասնագետ	1	3.1-7	223,000		223,000
39	Առաջատար մասնագետ	1	3.1-8	223,000		223,000
40	Առաջատար մասնագետ	1	3.1-9	223,000		223,000
41	Առաջատար մասնագետ	1	3.1-10	223,000		223,000
42	Առաջատար մասնագետ	1	3.1-11	223,000		223,000
43	Առաջատար մասնագետ	1	3.1-12	223,000		223,000
44	1-ին կարգի մասնագետ	1	3.2-3	198,000		198,000
45	1-ին կարգի մասնագետ	1	3.2-4	198,000		198,000
46	1-ին կարգի մասնագետ	1	3.2-6	198,000		198,000
	Տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին					-
47	Բաժնի պետ	1	2.1-11	407,000		407,000
48	Գլխավոր մասնագետ	1	2.3-29	274,000		274,000
49	Գլխավոր մասնագետ	1	2.3-30	274,000		274,000
50	Առաջատար մասնագետ	1	3.1-25	223,000		223,000
51	Առաջատար մասնագետ	1	3.1-26	223,000		223,000
	Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին					-
52	Բաժնի պետ	1	2.1-6	407,000		407,000
53	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-2	327,000		327,000
54	Գլխավոր մասնագետ	1	2.3-24	274,000		274,000
55	Գլխավոր մասնագետ	1	2.3-17	274,000		274,000
56	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	2.3-18	274,000		274,000
57	Առաջատար մասնագետ	1	3.1-15	223,000		223,000
58	Առաջատար մասնագետ	1	3.1-16	223,000		223,000
59	1-ին կարգի մասնագետ	1	3.2-7	198,000		198,000
60	1-ին կարգի մասնագետ	1	3.2-8	198,000		198,000
	Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին					-
61	Բաժնի պետ	1	2.1-7	407,000		407,000
62	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-3	327,000		327,000
63	Գլխավոր մասնագետ	1	2.3-19	274,000		274,000
64	1-ին կարգի մասնագետ	1	3.2-9	198,000		198,000
65	1-ին կարգի մասնագետ	1	3.2-10	198,000		198,000
66	1-ին կարգի մասնագետ	1	3.2-11	198,000		198,000
67	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-1	160,000		160,000
68	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-2	160,000		160,000
69	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-3	160,000		160,000
70	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-4	160,000		160,000
	Իրավաբանական բաժին					-
71	Բաժնի պետ	1	2.1-8	407,000		407,000
72	Գլխավոր մասնագետ	1	2.3-20	274,000		274,000

73	Գլխավոր մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	2.3-21	172,000		172,000
74	Առաջատար մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	3.1-17	160,000		160,000
75	1-ին կարգի մասնագետ	1	3.2-12	198,000		198,000
	Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժին					-
76	Բաժնի պետ	1	2.1-9	407,000		407,000
77	Գլխավոր մասնագետ	1	2.3-22	274,000		274,000
78	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	2.3-23	274,000		274,000
79	Առաջատար մասնագետ	1	3.1-18	223,000		223,000
80	Առաջատար մասնագետ	1	3.1-19	223,000		223,000
81	Առաջատար մասնագետ	1	3.1-20	223,000		223,000
82	Առաջատար մասնագետ	1	3.1-21	223,000		223,000
83	1-ին կարգի մասնագետ	1	3.2-13	198,000		198,000
	Գնումների և զարգացման ծրագրերի բաժին					-
84	Բաժնի պետ	1	2.1-12	407,000		407,000
85	Գլխավոր մասնագետ	1	2.3-31	274,000		274,000
86	Գլխավոր մասնագետ- զարգացման ծրագրերի պատասխանատու	1	2.3-32	274,000		274,000
87	Առաջատար մասնագետ	1	3.1-27	223,000		223,000
88	Առաջատար մասնագետ	1	3.1-28	223,000		223,000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
89	Վարորդ	2		267,000		534,000
90	Գործավար	1		248,000		248,000
91	Գործավար	1		184,000		184,000
92	Անվտանգության պատասխանատու	2		240,000		480,000
93	Մեդիա օպերատոր	1		274,000		274,000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
94	Փորձագետ-որոշակի գործառույթներ համակարգող	7		250,000		1,750,000
95	Անասնաբույժ (0.5 դրույք)	4		80,000		320,000
96	Ցանցային ադմինիստրատոր	1		234,000		234,000
97	Սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման պատասխանատու	1		234,000		234,000
	Ընդամենը	109				28,810,000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի Դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2024 թվականի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 192 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 1 հավելվածի:
2.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղաքայ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 194 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 2 հավելվածի:
3.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 195 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 3 հավելվածի:
4.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 196 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 4 հավելվածի:
5.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 197 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 5 հավելվածի:
6.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի

համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 198 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 6 հավելվածի:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը և տարածվում է 2024 թվականի փետրվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի
N 09 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7-ի
N 192 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2024 թվականի

Աշխատակիցների թվաքանակը՝ 37

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Տնօրեն	1	407000	407000
2		Փոխտնօրեն	1	200000	200000
3		Գլխ.հաշվապահ	1	208000	208000
4		Գործավար	1	140000	140000
5		Լուսային և ձայնային սարքավորումների օպերատոր	1	140000	140000
6		Էլեկտրիկ	1	140000	140000
7		Գանձապահ-ադմինիստրատոր	1	130000	130000
8		1-ին կարգի դերասան	4	110000	440000
		Բարձր կարգի դերասան	4	155000	620000
9		Հսկիչ	2	105000	210000
10		Պահակ	4	105000	420000
11		Հանդերձապահ	2	123000	246000
		Դռնապահ	0.5	52500	52500
12		Դռնապահ	2	105000	210000
13		Բեմի բանվոր - տնտեսվար	1	140000	140000
14		Հավաքարար	4	105000	420000
15		Հավաքարար	3(0,5)	52500	157500
16		Գեղմասվար	1	105000	105000
17		Տեխնիկական սպասարկող	1	105000	105000
19		Բեմանկարիչ	1	135000	135000
	Ընդամենը		35		4626000

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի
N 09 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 14-ի
N 194 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
<<ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
	2	3	4	5	6
1	<<Հրազդանքաղլույս>> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	220,700	220,700
3		Գլխավոր մասնագետ	1	165,000	165,000
4		Հաշվապահ	1	215,000	215,000
5		Պահեստապետ	1	235,000	235,000
6		Գործավար	1	120,000	120,000
7		Եռակցող	1	155,000	155,000
8		Հնոցապան օպերատոր	1	180,000	180,000
9		Էլ մոնտյոր	8	160,000	1,280,000
10		Վարորդ	2	146,000	292,000
11	**Ընդամենը**		**18**		**3,269,700**

Հավելված 3
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 06-ի
N 09 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7 -ի
N 195 որոշման

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 74

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Գլխ. մասնագետ - տնօրենի օգնական	1	197,000	197,000
3		Գլխավոր հաշվապահ	1	252,000	252,000
4		Հաշվապահ	1	105,000	105,000
5		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	315,000	315,000
6		Գլխ. մասնագետ	4	145,000	580,000
7		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	3	328,000	984,000
8		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	1	250,000	250,000
9		Մեխանիզատոր /սեզոնային/	9	130,000	1,170,000
10		Վարորդ /աղբահավաքման/	9	160,000	1,440,000
11		Վարորդ	9	105,000	945,000
12		Բանվոր /աղբահանության/	23	160,000	3,680,000
13		Բանվոր	4	105,000	420,000
14		Ավտոփականագործ	1	130,000	130,000
15		Ավտոէլեկտրիկ	1	200,000	200,000
16		Պահեստապետ	1	105,000	105,000
17		Պահակ	2	105,000	210,000
18		Շարժիչագործ /մատորիստ/	1	250,000	250,000
19		Էլ. եռակցող	1	150,000	150,000
	Ընդամենը՝		74		11,790,000

Հավելված 4
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6 -ի
N 09 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի -ի
N 196 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 72

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հատիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրազդան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Հաշվապահ	1	225,000	225,000
3		Առաջատար մասնագետ	2	155,000	310,000
4		Մասնագետ	5	105,000	525,000
5		Պահեստապետ	1	158,000	158,000
6		Էլ. փականագործ	1	105,000	105,000
7		Բանվոր	11	125,000	1,375,000
8		Վարորդ	2	105,000	210,000
9		Վարորդ	2	110,000	220,000
10		Վարորդ	1	200,000	200,000
11		Բարձիչավար	1	110,000	110,000
12		Ծաղկաբույծ	3	105,000	315,000
13		Հավաքարար	34	125,000	4,250,000
	Ընդամենը		65		8,410,000
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	
	Ընդամենը		72		8,410,000

Հավելված 5
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 06 - ի
N 09 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 07- ի
N 197 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Աշխատակիցների թվաքանակը՝ 13

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկ	Տնօրեն	1	275000	275000
2		Հաշվապահ	0.5	105000	52500
3		Հյուսն	1	173000	173000
4		Հսկիչ	2	105000	210000
5		Մաքրուհի	6	124000	744000
6		Էլեկտրիկ	1	105000	105000
7		Գրիչերայրս հանձ	1	105000	105000
Ընդամենը			12.5		1664500

Հավելված 6
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 06 -ի
N 09 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 07-ի
N 198 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 28

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Տնօրեն	1	407000	407000
2		Գլխ. հաշվապահ	1	160000	160000
3		մասնագետ	2	105000	210000
4		Գործավար	1	105000	105000
5		Հսկիչ	5	105000	525000
6		Վարորդ-մեխանիզատոր	2	147200	294400
7		Բանվոր	13	105000	1365000
8		Մաքրուհի	3	105000	315000
	Ընդամենը		28		3381400

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 10

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07 -Ի N 200 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 200 որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի
N 10 որոշման

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7 -ի
N 200 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Հրազդանի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	208,000	208,000
2	Մեթոդիստ ,ուս. գծով տնօրենի տեղակալ	1	115,000	115,000
3	Գլխավոր հաշվապահ	1	120,000	120,000
4	Բուժքույր	1	105,000	105,000
5	Դաստիարակ	8.96	110,000	985,600
6	Դաստիարակի օգնական	8	110,000	880,000
7	Երաժշտության դաստիարակ	2	110,000	220,000
8	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110,000	110,000
9	Հատուկ մանկավարժ (հոգեբան, լոգոպեդ, սուրդոմանկավարժ, օլիգոմանկավարժ, տիֆլոմանկավարժ)	0.5	110,000	55,000
10	Տնտեսվար	1	105,000	105,000
11	Պահեստապետ	0.5	105,000	52,500
12	Գործավար	1	110,000	110,000
13	Խոհարար	2	105,000	210,000
14	Խոհարարի օգնական	1	105,000	105,000
15	Օժանդակ բանվոր	0.75	105,000	78,750
16	Հավաքարար	1	105,000	105,000
17	Դռնապան	1	105,000	105,000
18	Պահակ	1	105,000	105,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	33.71		3,774,850

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 11

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 25-ի թիվ 1 արձանագրությունը.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>

1.Նվազեցնել Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող հետևյալ երեխաների տեղական վճարները 50%-ի չափով 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը.

1) Ալեքս Լևոնի Կարապետյան – «Հրազդանի թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2) Վաղինակ Վիգենի Սահակյան - «Հրազդանի թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
3) Արեգ Արմենի Պողոսյան - «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
4) Ալեքս Մխիթարի Հովսեփյան - «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
5) Ալեքս Գասպարի Գյանջումյան - «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
6) Անգելինա Նորայրի Օսմանովա - «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
7) Դավիթ Մանվելի Գալստյան - «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
8) Միլենա Սերոբի Զաքարյան - «Հրազդանի թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
9) Ալեքսիս Ռաֆիկի Թադևոսյան -«Հրազդանի թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
10) Արփի Վարդանի Օհանյան -«Հրազդան համայնքի Լեռնանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
11) Ալեն Բորիսի Սարգսյան - «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական

դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
12) Գոռ Բորիսի Սարգսյան -«Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
13) Մարիա Բորիսի Սարգսյան - «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2.Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող հետևյալ երեխաներին վարձավճարի վճարումից ազատել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը.
1) Արեգ Սամվելի Հովհաննիսյան- «Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2) Ալեքս Վազգենի Բարսեղյան - «Հրազդանի թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 12

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N 104-Ն որոշումը, «Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի» տնօրեն Ա.Վարդանյանի 2024 թվականի հունվարի 8-ի N 04 գրությունը և «Օլիմպիա» շախմատի դպրոցի տնօրեն Գ. Ալավերդյանի դիմումը.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8 խմբի 4 բաժնի 2 դասի 51 «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» ծրագրի 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված ծախսերից 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/-ական դրամ, որպես ֆինանսական օժանդակություն հատկացնել «Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցին» և «Օլիմպիա» շախմատի դպրոցին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից 2024 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները հաստատելու մասին» N 199-Ն որոշումը լրացնել 5.1 կետով հետևյալ բովանդակությամբ՝ «5.1. Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվող մեկ երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց տեղական վճարի չափը սահմանել թատերական խմբի համար ամսական 10000 (տասը հազար) դրամ:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 209-Ն որոշմամբ սահմանվել էին Հրազդանի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության, մշակութային և նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից 2023 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները հաստատելու մասին պայմանները: Վերը նշված որոշման 5-րդ կետով սահմանվել էր նաև Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայության դիմաց՝ թատերական խմբի դասընթացների համար, 10.000 դրամ տեղական վճար: Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման մեջ ներառված չի եղել այդ կետը, սակայն Հրազդան համայնքում թատերական խմբի պահանջարկով պայմանավորված 2024 թվականին ևս դասընթացները շարունակական բնույթ են կրելու, ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել համապատասխան լրացում: Ներկայացված նախագիծը նպատակ ունի կանոնակարգելու վերոնշյալ ոլորտը:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման և նվազեցման մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.

Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կանոնակարգելու վերը նշված ոլորտը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվար 2024 թվականի N 14

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 11-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հրազդան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի 2023 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -4

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 փետրվար 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 6-ի
N_14_ որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրազդան համայնքում 2023 թ-ի ընթացքում պլանավորվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1.«Համայնքի երաժշտական և արվեստի դպրոցների նորոգում, ջեռուցման համակարգի կառուցում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
